

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական,

55^{րդ} ՏԱՐԻ, Է. ՇՐՋԱՆ

ԹԻԻ I

I ՄԱՐՏ 1906

„ՄԱՍԻՍ“Ի ԹԵՐԹՈՆԸ

ՄԱՍԻՍԻ յառաջիկայ թիւէն կըսկսինք հրատարակել, իբրեւ ԹԵՐԹՈՆ

ՏՕԲԹ. ԼԷՕԲՕԼ ԳԱՐԼԱՆԻ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԸ

որ ոչ վէպ մըն է, ո'չ ալ մտացածին պատմութիւն մը. այլ, օրուան այժմէութիւն ունեցող արկածալից կեանքի մը դրուագներուն նախագրութիւնը, գերազանցապէս շահեկան: Բարիչի Բօնիֆուս տ'Էսքօնդ գրամատան քանի մը միլիոնները իւրացնող ու իր հոմանունէին հետ զրօսանաւով մը Պրագիլիա փախող երիտասարդը, Կալէ, որ Պառոն տը Կռավալ կեղծ անունով ճամբորդած էր, Յրանսա վերադարձուած ըլլալով, դատուեցաւ վերջերս Տիկին Մէռլլիէ հետ: Տօքթ. Լ. Գաբլան, որ խաբուելով անոնց ընկերացած էր մինչև Պրագիլիա, բարիդեան թերթի մը մէջը նկարագրէ կեղծ Պառոնին ու Պառոնուհին այս յանդուգն ուղեւորութիւնը, յարակից պատահարներով՝ ծովու և ցամաքի վրայ, որ ժիւլ Վէռնի ուղեւորական պատմուածքներէն վար չի մնար, — իրական ըլլալու պայմանով:

ՄԱՍԻՍԻ ընթերցողներուն համար հաճելի ժամանց մը պիտի ընծայեն այս հետաքրքրաշարժ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԸ, թերթին գրական եւ այլ նիւթերուն հետ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթաբերքի տարեկան բաժանորդագինն է Կ. Պոլսոյ համար ֆառսուն դրօ. եւ գաւառներուն համար յիսուն դրօ., կանխիկ վճարելի: Արտասահման՝ 12 Ֆրանք կամ 5 րուպի: Թղթատարական ծախքը հաւաքուածքան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ հրատարակ կ'ելլէ ամէն շաբաթ առօրէ:

Ձի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասչելի պայմաններով:

Ձեռ-ԲԷ ԿԸ ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ԲԱՌՍՈՒՆ ՓԱՐՍՅԻ
Հասցէ

درعلاءه غلطه ده (ماسيس) غرضه سى اداره سى

ԻՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Ղալաթիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

UNIVERSITY OF CALIFORNIA

LIBRARY

PHILADELPHIA

1877

1877

1877

1877

1877

1877

1877

1877

1877

1877

1877

1877

1877

1877

1877

Ծաղկաբուսական

Թեյը, որ այսօր գրեթե բոլոր ժողովրդաց գլխավոր ըմպելին դարձած է, ա՛յնքան բազմաթիւ տեսակներ ունի որ, արդարեւ գործածողներուն համար բաւական դժուար է լաւ ընտրութիւն մը ընել: Այդ տեսակներէն սմանք նշանաւոր են իբր տիրութեամբ եւ քաղցրաբայր, սմանք ալ թէեւ նոյնքան տիրութիւն համ ու հոտ չունին, գերազանց են սակայն իբր կաշիքութիւն եւ զօրացուցիչ: Վերջապէս իւրաքանչիւր թէյ իր ուրոյն յատկութիւններն ունին որոնք շինքը կը զանազանեն ուրիշ, տեսակներէ:



Սակայն կալ թէյ մը, որ այդ յատկութեանց ամէնէն կարեւորները կը միացնէ իր վրայ, այսինքն՝ դոյն, համ հոտ եւ մանաւանդ կաշիքութիւն եւ զօրացուցիչ անշուշտական ազդեցութիւն մը, եւ այդ թէյն է ճաբոնցի քէյը, որ այդ յատկութեանց շնորհիւ կը յարմարի ամէն տարիքի ու կազմութեան. ամէն կլիմայի եւ եղանակի եւ ամէն էաշակի:

Յալբուսեան եւ Իսազուլեան քէյի մեծ վաճառատունը, իր բազմաթիւ յաճախողաց ծառայութիւն մը մատուցանելու համար, այս անգամ մեծաքանակ ներածած է անթոնական զուտ թէյ մասնաւոր եւ գոկական առեփարպ ու կը հրաւիրէ օգտուել այս առիթէն բոլոր անոնք, որ կը փոփոքին ունենալ թէյ մը:

Համով, հոտով, առողջապահիկ եւ կազդուրիչ:

Սոյն վաճառատան մէջ կան նաեւ հեղեղան, չիւսկան, Սէյլան եւ ճովայի մանուշակ թէյեր:

Ուսադուրիւն մարգալի

1—10

ՏՈՔԹ. Բ. ԷՄԻՐՁԷ

Հանրածանօթ մանուկաբուժ եւ կնիւնաբան(gynécologue), Տօքթօր Էմիրզէ որ 15 տարւան գործունէութեամբը մեծ համբաւ ստացած է, կը ծանուցանէ յոր. գոյ յաճախողներուն թէ բնականորէ փոխադրած է Պէքեար փողոց թիւ 18: Դոյս ի վերայիշեալ իւր մասնագիտութենէ կը բուժէ նաեւ նորագոյն մէթոաներով ջղային եւ հագեկան ու երեւակայական ամէն տեսակ հիւանդութիւնները, ինչպէս նէվրոսթէնի եւ tic անուանուած աչքի երեւի եւ աւտիստ ագեղ եւ ալամայ շարժումները եւ դաշտանի դադարումէ յառաջ եկած ջղային խռովումները եւ երիտասարդական մօլիքները, ինչպէս նաեւ գրեհմօլիքը, մօրիֆնամօլիքը եւայլն: Կիրակիներէն զառ ամէն օր կէսօրէն սկսեալ մինչեւ երեք ժամ հիւանդ կընդունի, եւ ուրբաթ օրերը ձրիաբար կը դարմանէ վկայեալ աղքատները: 1—10

ՆԱԶԱՐԷԹ ԽԱՉԷՐԵԱՆ

Փ. Ս. Ս. Ս. Ս. Ս.

Պոլիս, Մարբուհնայար, Պարնաբան խան Թիւ 26

Ամէն կարգի դատեր կը ստանձնէ եւ խնդրոյ առարկայ եղած գործերու համար թէ՛ բերանացի եւ թէ՛ թղթակցութեամբ բանակցութիւններ կը կատարէ եւ կործիք կը յայտնէ. կը խմբագրէ եւ կը թարգմանէ դատերու եւ առեւտրական ու սովորական պայմանագրութեանց վերաբերող թուղթեր: Ուրբաթ օրերը մինչեւ կէս օր ձրիաբար խորհրդակցութիւն կը կատարէ եւ կործիք կը յայտնէ:

Ապահովագրական գործառնութիւններու եւ ի մասնաւորի կեանքի ապահովագրական ընկերութեանց նկատմամբ անհրաժեշտ եղող տեղեկութիւնները ձրիաբար կուտայ:

Կըլանձնաբար որ մինչեւ օր այս մասին կարեւոր եղած տեղեկութիւնները իրմէ չստացուին, ապահովագրութիւն չի ստորագրուի: Ապահովագրական վիսուսը հասուցման գումարներու եւ փոխարժէքներու գանձումը եւ կը ստանձնէ:

1—10

ԱՅՐ, ԿԻՆ, ՏՂԱՅ

Մարդս տենդի հիւանդութենէ վերջը տկար կը մնայ, մանաւանդ տղայ մը:
Թէպէտեւ հարկ չիտեսնուի, հիւանդին պէտք է տալ



SCOTT'S EMULSION

և տկարութիւնը անմիջապէս և վստահափար կը փարատէ
և կը տեսնուի որ

ԸՍԳՕԹԻ ԻԵՂԱԳԻՐՈՒԹԻՈՒՆ

մարմինը պատող բոլոր տկարութիւններու դեմ
ամենամեծ դեղ է: Արեգական տակ ասոր հաւասար
բան մը չիկայ. այնպէս կատարեալ կը բժշկէ՝ որ կը
կարծուի թէ հիւանդութիւնը կուտէ ու կը կլլէ:

Բոլոր բեղադրածները և բեղալծածները և ծախի:

Շնչերու վրայ ասոր ուշա-
դրութիւնը ընել պէտք է:

18

PHOENIX ASSURANCE L Co.

“ՖԻՆԻՔՍ”



ՀԻՄՆԵՍԱԼ Ի ԼՈՆԴՈՆ 1782 ԻՆ

ԿԸ ՓՈՐՓԵՆ Ի ՊՈԼԻՍ 1869 ԴԵ Ի ՎԵՐ

ԱՆԳԼ. ԱՊԱՀՈՎԱԳԻՐԱԿԱՆ ԸՆԿ.

Իրամագլուխ եւ պահեստի դրամ

Ս.ԱՂ. ոսկի 4,218,000

Ֆինիքս սոսկ հրդեհի դէմ Ապահա-
վագրուող Ընկերութիւն մըն է, ծանօթ
իւ պատուաւորութեամբ եւ վստահ մէջ
իւ անմիջական վճարումներով:

Ֆինիքս կ'ապահովագրէ հրդեհի եւ
կայծակի դէմ մէկն առաջ անշարժ եւ
շարժուող ստանդարտը, յստի նպատակը
պայմաններով:

Ընկերութեան նշանաբանն հղած է.

ՈՒՂՂԱՄՏՈՒԹԻՒՆ Եւ ԱՆՄԻՋԱԿԱՆ
ՀԱՏՈՒՑՈՒՄՆ ՎՆԱՍՈՒՑ. ՅՈՂ ՎԵ-
րած է առաւել քան 27,000,000 անգլ.
ստերլինգ:

Ընդհ. գործակալ Պալատի եւ գաւա-
սաց: Գ. ՎԱՐԴԱՆԵԱՆ
Վիքայիս խան, Պանֆ Օքսմանի մօտ
Ղալաթիա:

Փոխ գործակալ Ի Պալատի
Թոմաս ԱՐԻԿԵԱՆ ՃԻՎԱՆ ԹԵՔԷՆԱՆ
Էմիլի Կիլ խան Ֆինսկիան խան
Հանիլ Բիգերու

1—10

Ա. ԷՆՔՍԷՐՃԵԱՆ

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Գ. ԳԱՐԻԻԷԼԵԱՆ

ՌԵՐԱ, ՄԵՍ ՓՈՂՈՑ ԹԻՒ 200

Կալաթա-Սէրայի Լիսէին դէմ

Դե. Նե. Շբ. օրերը առաւօտեան կանու.

խան մինչեւ իրիկուան ժ. 11 1/2

Բե. Դե. Ուր. օրերը ճեմ մինչեւ 11 1/2

Կիրակի օրերը ժամադրութեամբ 1—10

ՄԱՍՈՒԼԻՆ

55^{րդ} ՏԱՐԻ, Է. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 1

1 ՄԱՐՏ 1906

ՄԱՍՈՒԼԻՆ ԶՈՒՐՋ

1906 տարուան սկիզբը, մեր գրական—
լրագրական հրապարակին վրայ,—ի՛նչ հեզ-
նութիւն՝ այս «հրապարակ» բառը որ գոր-
ծածական դարձած է մեր մտաւորական
կեանքին համար, իբր թէ բամպակի կամ
երկաթի հրապարակներուն նմանէր ան,—
նշմարուած միակ փոփոխութիւնը՝ Բիւրակներ
ինքնաբեր դադարումը եղաւ։ Պատ... Իւ-
թիւճեանի թերթը իր կէս-կրօնային՝ կէս-
գրական տարազը փոխեց, առեւտրականի
վերածուելու համար։ Ծշմարիտ է թէ, այդ
չաբաթաթերթը՝ Հայ—Բողոքական հասա-
րակութեան լուսաւորեալ մասին organe մը
ըլլալով հանդերձ՝ Բրօֆ. Յ. Ճէճիգեանի
խմբագրապետութեան ներքեւ բոլորած իր
հինգ տարուան շրջանին մէջ զգալապէս չե-
ղած էր այդ ուղղութենէն, եւ գրական,
տնտեսական, ընկերային նիւթերով համեմ-
ուած կը ներկայանար իր ընթերցողներուն,
ենովք Արմէնի մնայուն ու ձեռնհաս աշխա-
տակցութեամբ, առանց բնաւ մոռնալու լայն
բաժին մըն ալ նուիրել Աւետարանականաց
հոգեւոր գործերուն. եւ սակայն իր ընծայած
այս պէսպիսութիւններուն հակառակ, կանգ
առաւ «նիւթական անբաւականութեան պատ-
ճառաւ» ինչպէս անկեղծութիւնը ունեցաւ
յայտարարելու Բրօֆ. Ճէճիգեան, իր հրա-
ժեշտի յայտարարութեանը մէջ։ Բրօֆ. Ճէ-
ճիգեան կատարեալ տիպար մըն էր «պատ-
ուակալ խմբագրապետ»ի որ նիւթական որ
եւ է ակնկալութիւն չունէր իր վարած չա-
բաթաթերթէն եւ կը շատանար անոր ըն-
ծայած մտաւորական կամ բարոյական գո-
հացումովը։ Այն վայրկեանին ուր տեսաւ
թէ այդ գոհացումը կը պահանջէր նաեւ

դրամական մեծկակ զոհողութիւններ իր
կողմէ, թերթին բացը գոցելու համար տար-
ուէ տարի, լաւագոյն սեպեց դադարեցնել
հրատարակութիւնը։ Եւ իրաւունք ունէր։
Մեր Բողոքական եղբայրները, այդ հինգ
տարուան շրջանին մէջ, այնպէս մը քաջա-
լերած ըլլալու էին Բիւրակներ, որ անոր
տեւականութիւնը ապահովուէր. եւ ասոր
համար կը բաւէր միայն որ ստուար թիւով
բաժանորդներ ներկայանային, — «վճարող»
բաժանորդներ։ Ասոնց թիւը նուազեցաւ
հետզհետէ ու խրամատ մը բացուեցաւ մուտ-
քին կողմը։

Աւանդական խօսք մը դարձած է մեր
մէջ, թէ գրչի մարդերը՝ գրագէտ, հրապա-
րակագիր՝ գործի մարդեր չեն ըլլար ընդ-
հանրապէս, եւ վաճառականին, սեղանաւո-
րին դրական միտքը չունին։ Ո՛ր աստիճան
ճիշդ այս է մեղադրանքը, երբ չաբաթ չանց-
նիր որ մէկ—երկու անանկութեանց լուր չի
կարդանք թերթերուն մէջ, յաճախ «կադմա-
կերպուած անանկութիւններ» երկրորդական
վաճառականներու, խանութպաններու օրօնք
քանի մը հազար օսկի մէկ կողմ կը դնեն՝
նախապատրաստուած հաշուետւումներու
շնորհիւ։ Ասոնց միակ արդարացումը սա է
որ, պահանջքնին չեն կրցած գանձել ու
վճարումին կատարել ժամանակին. քանի
մը որ կը խօսուի վրանին, ու կը մոռցուին
կերթան, փոյթ չէ թէ աս ու ան վնասուած
ըլլան եւ ոմանք ալ թշուառութեան մատ-
նուին իրենց երեսէն, մինչեւ իսկ անձնա-
պանութեան մղուելու տատիճան։

Խմբագիրը, որ թերթ մը կը վարէ, ինքն
ալ իր բացերը, իր պահանջները կ'ունենայ

հարկաւ . եւ եթէ յանկարծ դադրեցնէր իր հրատարակութիւնը , պատճառելիք չլիար՝ կանխիկ վճարած բաժանորդներուն տարեկան կէս կէս կամ մէյմէկ ոսկին միայն պիտի ըլլար , աննշան գումար մը՝ իր գործառնութիւնները դադրեցնող վաճառականին պատճառած շեղանքներուն բաղդատմամբ որ հարկւրաւոր ոսկիներով կը հաշուի իւրաքանչիւր պահանջատէրի համար : Բայց խմբագիրը , աւելի խղճամբտ քան սնանկացող վաճառականը ու նուազ նիւթապաշտ , կա՛մ յարատեւութեան ջանք մը կընէ՝ գէթ իր պարբերական հրատարակութիւնը դադրեցնելու համար ա՛յն պիտի չըջանի մը ուր , փոյթ չէ թէ պահանջը ունենայ շատ մը բաժանորդներէ , բայց պարտք չունենայ կանխիկ վճարող բաժանորդներուն , ինչպէս ըրաւ Բրօֆ . Ծէճիզեան . եւ կամ կ'աշխատի ղրամական վարկ մը կամ աջակցութիւն մը գտնել՝ իր պիւտճէն հաւասարակշռելու համար , սպասելով յաջողագոյն չըջանի մը : Ինչ շատ հաւնուած ու գնահատուած շաքաթաթերթի մը տարեկան պիւտճէն 250էն 300 ոսկիի գումարի մը կը յանգի , որուն 80 — 100 ոսկին բաց կը մնայ շատ անգամ , հասոյթներու անբաւականութեան եւ ապառիկ բաժանորդագրութեանց պատճառաւ . ասով հանդերձ , անոնց վարիչները վերեւ յիշուած երկու եղանակներէն մէկը կ'ընտրեն , ու դարձեալ նուազ «գործի մարդ» կը ճանչցուին՝ քան առեւտուրի մարդը որ անակնկալ կերպով սնանկ կը յայտարարէ ինքզինքը : Անոնք , խմբագիրները , իրենց համեստ սահմանին մէջ , գէթ աւելի՛ պարկեշտ ու աւելի՛ պատուոյ նախանձախնդիր ըլլալու ներքին գոհունակութիւնը կունենան քան հաղարաւոր ոսկիներու հետ խաղացող ու սնանկացող վաճառականը :

Լրագրական նշմարներու յատուկ այս բաժինին անհամապատասխան երեւնային գուցէ դրականի ու դրամականի վերաբերող այս անցողակի խորհրդածութիւնները , եթէ նիւթը ինքնին չի ներկանար Բիւրակին առեւտրական թերթի վերածուելով : Անոր արդի վարիչ — խմբագիրը , Սիմոն Չէօմէլքճեան , իր երբեմնի «Առաջնորդ վաճառակա-

նաց» պարբերականովը ու Մանգումի մէջ կանոնաւորապէս հրատարակած առեւտրական բաժինովը . փորձը տուաւ արդէն թէ ինչքան ձեռնհաս է այդ ճիւղին՝ իր ընտրած աշխատակիցներովը : Կը մաղթենք յաջողութիւն ու յարատեւութիւն՝ լրագրական այս նոր ձեռնարկին որ նոր տարիին հետ նորութիւն մը ընծայեց մեր մամուլին , որ իր ճոխ օրաթերթերուն , գրական ու այլ շաքաթաթերթերուն և կանանց յատուկ հանդէսին վրայ աւելցած տեսաւ վաճառականութեան յատուկ թերթ մըն ալ :

Երկու խօսք ալ մեր մասին :

1906 Յունուարի սկիզբը , Մասիս բոլորեց իր հաստատման 54րդ տարին ու 55րդը թեւակոխեց , ինչ որ անշուշտ հաճոյքով կը դիտուի մամուլի ու գրականութեան բարեկամներուն կողմէ մասնաւորապէս եւ ընթերցող հասարակութեան կողմէ ընդհանրապէս : Թերթի մը գոյութիւնը սերտիւ կապուած ըլլալով իր պատկանած համայնքին մտաւորական կեանքին հետ , որուն ցոլացումը կը կրէ իր մէջ եւ զանազան երեւոյթներուն պատկերացումը կուտայ , անոր երկարատեւ պահպանմանը ու անխափան հրատարակութեանը համար թափուած ճիգերը մեծապէս կը տարբերին ուրիշ որ եւ է ձեռնարկութեան շարունակման ու յաջողութեան նուիրուած աշխատանքներէ , եւ թէեւ վերջինները խոստումնալից ու արդիւնաւոր ըլլան նիւթապէս , առօրինները կ'ընծայեն բարոյական գոհացում մը ու վայելք մը որ գերազանց է շատերուն համար : Այս գոհացումը ու վայելքը թերթին խմբագրութեան միայն բաժինը չեն , այլ ամէն անոնց որոնք իրենց գրչին օժանդակութիւնը նուիրուած են ու իր նուիրեն : Շնորհակալութեան պարտակաւ նուրիւն մը ունինք ուրեմն մեր յարգելի աշխատակիցներուն , ինչպէս նաեւ մեր ազնիւ ընթերցողներուն՝ իրենց ցոյց տուած համակրութեանը համար , որ յուսանք թէ պիտի շարունակուի նաեւ յառաջիկային :

Տարին զոր բոլորեցինք , ամբողջական չըջան մը չեղաւ դժբախտաբար Մասիսին

համար՝ որ 1900ի սկիզբէն մինչեւ 1904ի վերջը կանոնաւորապէս հրատարակուելէ ետքը իր գրական շաբաթաթերթի արդի ձեւին տակ, միշտ միեւնոյն խմբագրութեամբ ու վարչութեամբ, 1905ի միջոցին կարճատեւ ընդհատումներ ունենալու հարկին մէջ գտնուեցաւ։ Այս յապաղումներէն վրասուողը, — հարկ է չեղտել, — բաժանորդները չեն սակայն, որոնցմէ իւրաքանչիւրը պիտի ստանայ իր իրաւունքը եղող պակաս թերթերը։

Մեր եօթներորդ տարեշրջանի սկիզբը, այս երկտող յայտարարութենէն աւելի բան մը ըսելու պէտք չենք տեսներ առ այժմ մեր ընթերցողներուն, որոնցմէ անոնք մանաւանդ որ 1900ի սկիզբէն Մասիս կըստանան կանոնաւոր կերպով, թէ՛ այստեղ և թէ՛ Կ. Պոլսէն դուրս, իրենց այդ յարատեւութեամբն իսկ ցոյց կուտան թէ սիրելի է իրենց այս վաղեմի թերթը ուր՝ առջի օրէն՝ մեղի ուղեգրի ընտրեցինք օգտակարը հաճելիին խառնել, գրականը գիտականին հետ, բանաստեղծականը արուեստականին հետ, և այլն։ Շրջանի մը սկիզբը ինչ որ ալ ըսուի, ի՞նչ որ ալ խոստացուի ընթերցողներուն, իրերու ընթացքը կրնայ փոփոխուիլ։ Ներբերել անոնց կատարմանը մէջ, և յաճախ ալ բարեփոխումներ։ Այնատակիցներ կը հեռանան կամ առժամապէս կը դադրին գրելէ, և ուրիշներ կուգան բռնել անոնց տեղը։ Երբեմն օտար էջերն են որ լայն տեղ մը կը գրաւեն ու երբեմն ինքնուրոյն գլուխքներ և մե'ր իսկ հանրային ու մտաւորական կեանքը՝ երբ նիւթ հայթայթեն անոնք։ Բայց միշտ շահեկան նորութիւններ ընծայելու փափագ և ջանք կայ խմբագրութեան կողմէ, ինչ որ չպիտի պակսի նաև ներկայ շրջանին մէջ, Մասիսը աւելի՛ ճոխ ընծայելու համար։

ԽՄԲԱԳՐ. «ՄԱՍԻՍ»Ի

ՄԱՍԻՍԻ ներկայ թիւին նիւթերը կը կազմեն անոնք որ պատրաստուած էին 1905ի վերջին շաբթուան թիւին համար, որով՝ Մօրիս Պառէսի նուիրուած յօդուածը և ուրիշներ՝ կրնան քիչ մը կորսնցուցած ըլլալ իրենց այժմեութիւնը։ Հետեւաբար, յառաջիկայ շաբթուան թիւն է որ պիտի կրնայ նկատուիլ իսկապէս՝ մեր նոր տարեշրջանի Ա. թիւը։

ԳՐԱԿԱՆ ԴԵՍՔԵՐ

ՄՕՐԻՍ ՊԱՌԷՍ

Ուրախութիւնս չափ չունենար, երբ կը լսեմ որ անհետացող Ակադեմականի մը տեղ բանաստեղծ մը ընտրած են։

Ասիկա թերևս անիրաւ մտածում մը ըլլայ քիչ մը չափազանց դրապաշտ միտքերուն համար, սակայն կրնամ ձեղի ապահովցնել որ հզօր անձնամոլութենէ մը չբղխիր բնաւ այդ ուրախութիւնը։

Չեմ ըսեր որ գիտունները, ատենաբանները, փիլիսոփաները իրաւունք չունին Անմահներու աշխարհին բնակիչը ըլլալու, — բընակչութիւն մը որ, աւա՛ղ, քառասուն հոգիէ կը բաղկանայ միայն և որուն հեռանը կարը այնքան անձնաւորութիւններ կը խելայեղէ։

Հերետիայի տեղ, օրինակի համար։ չպիտի բաղձայի որ Հանրի տը Բարվիլ ընտրէին իբրև ակադեմական։ Մօրիս Պառէսէն թերևս աւելի յարմար ընտրելի չըլլար, բանաստեղծ մը զոր ա՛յնքան կը սիրեն Բարիդի և Լօռէնի հապարակութիւնները։

Ինքը Լօռէնցի է բնիկ, և մի՛ զարմանաք եթէ այնքան տենդոտ համակրանքով մը փորած է Ֆրանսական ոգիին ու ծննդավայրին, հակառակ այս վերջինին Գերմանացիներուն անցնելուն։

Իր հոգին չէ՛ այլասերած բնաւ, և թէ և չա՛տ ասպարէզ փոխած է իր կեանքին մէջ, մնացած է միշտ գեղեցիկ հատորներու և գրական ուղղութիւններու այն հեղինակը որուն գոյութիւնը ակադեմական ըլլալուն օրը չէ՛ որ ճանչցաք ապահովաբար, ուրիշ շատ մը ընտրելիներու նման։

1889ին երեսփոխան ընտրուած, և Պուլանժէական կուսակցութեան յարած է։ Ասիկա իրեն համար վնասակար եղած է, վասնզի այդ միեւնոյն ըմբռնումով երբ Տրէյ-Գիւսի խնդրին ատենները ազգայնական

կուսակցութեան կը յարէր, շատերու աչքէն ինկաւ: Իր կեանքին մէջ, անկէ ի վեր, մէկ քանի անգամներ փորձած է կրկին երեսփոխան ընտրուիլ, սակայն չէ յաջողած:

Գրականութիւնն է որ զինքը բարձրացուց, համբաւի տէր ըրաւ, և վերջապէս քսաներկու ձայնով ընտրելի ներկայացուց, մինչդեռ իր մրցակիցներէն ոմանք մէկ, և չա՛տ չատ ութը քուէ շահեցան:

Հրաշալի արձակագիր մը եղած է, քընարերգակ բանաստեղծ մը և հմուտ քննադատ մը: Իր ճամբորդութեան նկարագրութիւնները մէկ մէկ հրաշակերտներ են զըլարթախոհութեան, դիտողութեան և խորհրդածութեան:

Ճկուն, ջղուտ ոճի մը մէջ կը ցանցնէ իր գաղափարները. յուզումին քով ժպիտ, սարսուռին քով հեշտանք կը դնէ, և ասոնք բոլորն ալ ա՛յն տեսակ բացատրութիւններով կ'արտայայտէ որ ամէն մարդ զինքը կը սիրէ ու կը հիանայ իր տաղանդին վրայ:

Վօլթէր ըսած է անգամ մը.—Շատ տեսակ տգիտութիւններ կան, բայց անոնց ամէնէն գէշը քննադատներունն է:

Բննադատներուն քով պահանջուած գիտութիւնը, բանաստեղծներուն զգայնակաւորութիւնն է, բառերու գեղահիւս բահուանդումը, արտայայտութեան գեղեցկութիւնը: Մօրիս Պառէս անթերի է այս մասին և բոլորովին արժանի գնահատութեան:

Մելամի Բիծերուն (1883), Քառքի լաթհին, (1885) և յաջորդ երկու երկերուն մէջ ա՛յնքան գեղեցկագիտութիւն դրած չէ որքան ղգացումի հրայրք: Le Journal քրոնիկագիրը տեսէք ինչպէս կը նկարագրէ Պառէսը.—

«Սպանիականէ աւելի պարսկական իր գլուխովը, իր կիսափակ աչքերովը որոնց մէջ չիրականացած՝ բայց դարձեալ հետապնդուած անուրջ մը կը հոսի, Մօրիս Պառէս յուզումներու հիանալի ընդունարան մըն է, քնար մը որ կը խօսի, և մէկը ֆրանսական ամէնէն բնիկ փառքերէն: Այս գրագէտը բնաւ չէ չեղած կատարելութենէն: Ու չեմ գիտեր որ սա ցուրտ օդերուն, արա-

գիւնները որոնք ափրիկեան երկիրները կը խուժեն, չպիտի՞ թռչին դէպի Սէնդ—Օտիլ, աղուոր լուրը իմացնելու համար»:

Սէնդ Օտիլ այն վայրն է ուր Պառէս իր վերջին գիրքին Au service de l'Allemagne-ին ամէնէն մեծ մասը գրած է: Այդ գիրքը որքան որ քաղաքական հանգամանք մը ունի, զերծ չէ նորէն գրական հաղուագիւտ ինքնատպութենէ մը, արժանիք՝ զոր բարեբաղդաբար եւրոպացիները գիտեն պէտք եղածին պէս գնահատել:

Յօդուածիս սկիզբը կ'ըսէի որ վերջին աստիճան «Յրանսացի» է ան: Ալլաւացիներուն ներքին կեանքը ցոլացնելու և յաւերժացնելու համար գրած է այդ գիրքը, որուն առթիւ ինք անձամբ ըսած է իր գրչի բարեկամներէն մէկուն.—Ամէն տարի Ալլաւս կ'երթամ: Հոն չա՛տ սիրելի բարեկամներ ունիմ. իմ գիրքս երկար ու համբերատար ուսումնասիրութեան մը արդիւնքն է: Շա՛տ երջանիկ եմ զանիկա վերջացուցած ըլլալուս և անոր արծարծած հետաքրքրութեան և առաջ բերած յաջողութեան համար: Յրանսայի և Գերմանիոյ մէջ անագին մեկնութիւններու տեղի տուած է: Անոր շնորհիւ է որ քիչ մը Ալլաւս—Լորէնին վրայ կը խօսին հիմակ, Հակառակ նշանաւոր բանասէսին, կը կարծեմ թէ ըրածս գէշ բան մը չէ, վասնզի մարդիկ կան որ չեն ուզեր խօսիլ, չա՛տ չմտածելու համար անոր վրայ...»:

Եթէ չեմ սխալիր, իր մտածումը կեդրոնացուցած էր աւելի Նանսիի «Ակադէմի տը Սթանիսլաս»ին մէկ անդամը ըլլալուն վրայ, քան Յրանսական Ակադէմիին:

Նախատագիրը երբեմն ասանկ սիրուն խաղեր չա՛տ կը խաղայ:

Մօրիս Պառէսի ակադեմական ընտրուելուն առթիւ այս մէկ քանի տողերը գրած պահուս, միտքս կիյնայ կեանքի պզտիկ յիշատակ մը, զոր չեմ ուզեր մոռնալ, և այսօր Մասիսի գրասէր ընթերցողներուն կը ներկայացնեմ, նշանակալից ուրախութիւնով մը հրճուելով, այս բարեդէպ գուգադիպութեան առթիւ:

Վիճակահանութեան համար ծախսած դրամն հաշիւի չեմ ենթարկած բնաւ, վստահ ըլլալով որ օր մը պիտի սոսկամ անձնական հաշուեյարդարութեան մը միջոցին: Այնպէս որ հիմակ կըսկսիմ չհաւատալ loterieներուն, հակառակ ամէն օր երջանիկ բաղդաւորենք որ հանդիպելուս, պաշտօնատեղիիս խցիկներուն մէջ:

Տասնոց մը տալս չի գար ատոր համար, վասն զի ա'լ վստահ եմ վերջապէս որ chance ըսուած ապրանքը ամէն մարդու քով չգըտնուիր:

Օր մը բարեկամներէս մէկը պզտիկ loterie մը սարքած էր: Ուզէի չուզէի պիտի մասնակցէի անոր անպատճառ: Եւ primeը արդէն այնքան աննշան գումար մըն էր որ... քառասուն փարայ միայն:

Տասը տասնըհինգ օր ետքն էր. բոլորովին մոռցած էի արդէն խնդիրը: Իրիկունը տուն գալուս, ինծի ծրար մը յանձնեցին, բացի և տեսայ թէ Մօրիս Պառէսի մէկ գիրքն էր:

Վիճակահանութեան ... առաջին պարգեւս էր ատիկա:

Մ. Ա. ՊԱՐՍՍՄԵԱՆ.

ԲԺՇԿԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

ՆՈՐԱՆԻՆ ՄԱՆՈՒԿԸ ԵՒ ԱՂԵԱՅ ԽԻԹ

Գրեթէ ընդհանուր առմամբ կրնանք ըսել որ խեղճ նորածիններու համար պէտք եղած առողջապահիկ ամենատարրական պայմանները չեն գործադրուիր մեր մէջ: Այդ անմեղ նորածիններուն, այդ սիրուն հրեշտակներուն մէջ պատահած մահերուն կամ հիւանդութեանց հարիւրին ութսունը մեր ծնողքներու տգիտութեան, անախտական սուգորութիւններէն ետ չի կենալու արդիւնքն են և ո'չ այլ ինչ:

Ամենէն աւելի յատկանշական պարագան սա է թէ խեղճ փոքրիկները ուղղակի իրենց ծնողքէն կը ժառանգեն կարգ մը ծանր

անտանելի հիւանդութիւններ: Խեղճ նորածինը, տակաւին հազիւ աչքերը բացած, առանց ծնողական առաջին և ամենատարրական խնամքները ընդունելու, արդէն իսկ ժառանգած է ֆրանկախտի պէս, ուռականութեան պէս կարգ մը հիւանդութեանց սերմերը: Ինչ ըսել այն մարդոց, որոնք անմեղ էակի մը կորստեան պատճառ ըլլալէ վերջ, բոլորովին անհոգ և անտարբեր մնալով՝ գէթ չեն փութար իրենց պատճառ եղած այդ մեծ կորուստը քիչ մը թեթեւցնելու համար՝ առողջապահական կանոնները յարգել: Օրինակները դժբախտաբար այնքան շատ են որ անկարելի է չի ցաւիլ:

Օրինակի համար, այն սիրուն ու անմեղ փոքրիկներուն մայրերը, որ տակաւին օդին փոփոխական ազդեցութեանց երբեք վարժուած չեն, կրնան տաքութեան, խոնաւութեան և կամ պաղի հանդիպելով, տեսակ տեսակ հիւանդութեանց ենթարկուիլ, իրենց կեանքի առաջին օրերուն մէջ իսկ: Թոքերը, որ դեռ առաջին անգամ ըլլալով սկսած են ուղղակի օդին ազդեցութեան տակ գործել, կրնան անոնք ալ իրենց կարգին հիւանդանալ, հիւծիլ: Աչքերը կրնան շատ տեսակ հիւանդութեամբ վարակուիլ, լոյսի զօրաւոր ազդեցութեան և յանկարծական փոփոխութեանց պատճառաւ: Ասկէ զատ, զօրաւոր լոյսը կրնայ ուղեղի երեք մակերէն ու և է մէկը բորբոքել և առաջ եկած խեղապատակաւոր (meningite) ազդեցութեամբ տղան մեռնիլ:

Ձիղերը՝ որոնք դեռ պէտք եղածին պէս չատ զգայուն չեն և իրենց փափուկ պաշտօնը կատարելու մէջ նոր են, կրնան զանազան հիւանդութեանց ենթարկուիլ, փոքրիկներու քնացած միջոցին յարուցուած սաստիկ աղմուկներուն պատճառաւ:

Վերջապէս մարսողական խողովակը, դեռ կաթիլ ուրիշ բան մարսելու կարողութիւն չունենալով, տեսակ տեսակ կերակուրներու ծամոցները կրնան շատ տեսակ հիւանդութիւններու ենթակայ ընել զայն: Տղուն ստամոքսը դեռ ի վիճակի չէ ըստ բաւականի մարսելու իւր իւր քիւրացնող հիւթեր արտադրելու:

Ասոնցմէ զատ՝ կաթը որ իրենց միա՛կ և մասնաւոր սնունդն է, կրնանք ըսել թէ նոյն իսկ կաթը, այո՛, կրնայ ստամոքսի և աղեաց խիթերու պատճառ ըլլալ: Ասոր ալ միակ պատճառը կամ կաթին պարունակելիք սընունդներուն անբաւականութիւնն է և կամ կանոնաւոր կերպով չի տրուիլն է, մինչդեռ մեր շատ մը մամիկները իրենց զաւկըներուն քով նստած, առանց այս կէտերը հասկցած ըլլալու կ'ելեն «կաթը պաղած է» կ'ըսին: Չերկարեմ. մինակ, նորածին մանկանց մէջ գրեթէ շատ անգամներ տեսնուած աղեաց խիթերու վրայ քիչ մը ծանրանամ, ըստ որում, անտեսուած կէտ մըն է այս մեր գրող բժիշկներու կողմէ, եթէ չեմ սխալիր յիշողութեանս մէջ, և կ'արժէ որ գէթ մեր մայրերը համառօտ տեղեկութիւն մը ունենան այս մասին:

* * * Ըսինք քիչ մը վերը թէ, աղեաց խիթը պղտիկներու՝ այսինքն վեց շաբթուան մինչև վեց ամսուան մանկանց մէջ աւելի յաճախ կը տեսնուի: Ասոր պատճառն ալ, մանկան սնունդին մէջ ֆօսֆօռաղէներու պակասութիւնը և բորակածնային մարմնոց անբաւականութիւնն է: Ուղղելու է այս թերութիւնը. մանկան մայրը պէտք է այնպիսի կերակուրներ ընտրէ որոնք ոսկոր կը շինեն, դնդեր և ջիղեր կը պնդացնեն, կերակուրներ՝ որոնք առատ բնասպիտ, նեարդ և կլլութեն կը պարունակեն: Բազմատեսակ և շատ համեմուած կերակուրներէ ինչպէս նաև ճարպային սննդեղէններէ պէտք է ի սպառ հրաժարիլ:

Եթէ մայր մը յղութեանը միջոցին առատ պտուղ ուտէ, անոր կաթը մանկան ու է է անկարգութիւն չի պիտի պատճառէ: Հետեւապէս մայր մը առաջուց պէտք է որ առատ պտուղ, առատ արմտիք, կաթ, հաւկիթ և ուրիշ ասոնց նման պարզ ու սննդարար կերակուրներ ուտէ:

Աղիքներու խիթով տառապող մանուկը պէտք է որ տաք պահուի: Տաք ջուրով լողանքներ, տաք անկողին և տաք հանդերձեղէն պէտք են անոր համար: Ըստ որում եթէ վայրկենապէս չազատիր ալ ցա-

ւերէն, սակայն մեծապէս կը թեթեւայ: Մեր մամիկները չաքարի մրուրէ շինուած օյաւակը տաք ջուրով խառնելէ վերջ, մէկ թէյի դգալ լեցուն կուտան՝ մինչև որ մանուկը հանգստանայ: Ասկէ ետ կենալու է բացարձակապէս. իրաւ է թէ պարզ բան մըն է տրուածը, բայց կրնայ ըլլալ որ պէս պէս ցաւերու ալ առիթ տայ. ասոր համար բժիշկ մը կանչել և անկէ կարծիք առնել պէտք է և պատշաճ:

ՏՕՔԹ. Տ. ԱԼԼԱՅՎԷՐՏԻ ՈՐԴԻ

Բրոֆ. Պէհրինկ վերջերս բժշկական հրապարակախօսութիւն մը կատարեր է Պէրլինի մէջ, իր գտած նոր մէկ բաղադրութեան կամ դեղին վրայ զոր tuberculase կ'անուանէ: Այս դեղը սահմանուած է ո՛չ թէ բժշկելու ուռականախտը (tuberculose), այլ մարդը զերծ պահելու անոր վարակումէն: Գիտնական բրոֆէսորը յայտարարեր է թէ, յառաջիկայ դարնան միայն պիտի երևան հանէ իր այս նոր դեղը ու անոր գործածութեան եղանակը:

Անգլիոյ մէջ կին խմբագիրներու թիւը կը հասնի 600ի, որոնք իրենց գրչին աշխատութեամբը ապրուստին կը հայթայթեն պարկեշտօրէն: Ամերիկայի մէջ շատ աւելի բազմաթիւ են անոնք, 2193, ինչպէս նաև Գերմանիոյ մէջ ուր 1200 կիներ լրագրական ղանադան աշխատութիւններով կը պարապին: Միացեալ Նահանգներուն մէջ կան նաև կիներ որոնք օրաթերթերու կամ պարբերականներու Տնօրէնուհիի պաշտօն կը վարեն, և անոնցմէ մէկը՝ Տիկին Պութհ՝ 40,000 ֆր. տարեթոյակ կը ստանայ: Արդէն Ամերիկայի մէջ լրագրութենէ զատ ուրիշ ամէն արուեստ ու ասպարէզ բաց են փափուկ սեռին առջև. կ'արժէ, իբր օրինակ, իրել Տիկին Էլլա Ռիտըր, որ երկաթուղիի շատ մը գիծերու շահագործման մենաշնորհը ունենալով, միանգամայն նախագահուհին է պղնձի հանքի կարեւոր ընկերութեան մը որ 70 միլիոն ֆր. դրամագլուխ ունի:

Կ Ե Ր Ա Վ Ս ՈՒ Ն Ք

«...ոկեալսս ի մտանել արեգականն
տեսաք զլոյս երեկոյինն...»

Յուշիկ փախչող իրիկուան ծիրանի լոյսն է՝ զըւարթ...
Ոսկի թելեր՝ պլլըւած խուսկի թաւի մըշուշին
Կապոյտ ծոպեր, ծիածան, ծըփուն ձայներ, միադի՛ք վարդ...
Լոյսէ արցունք մոմերու՝ որոնք իղձով կը մաշին:

Խուսկի ծարաւ իմ հոգիս կը ծծէ պահն այս հանդարտ,
Ոսկեկըրակ աչքերով բուրվառներն երբ կը ճօճեն,
Պակուցում մը հոգեգրաւ հոն կը թողու զիս անթարթ,
Կըզգամ համբոյրն իմ հոգիս պարուրող բիւ մարմաջին:

Մեղեսիկի երանգներ կ'օժեն պարոյրը խուսկին...
Ես կըսպասեմ որ ծագի հոգւոյս պայծառ կիրակին,
Խորանին եմ ծնրադիր, բաղուկներս խաչանիլ:

Ջահերն հիմակ կ'երազեն, համակ զիւմրիւթ ու թարլիլ...
Կամարներէն, խորանէն կը ծագին լոյս ու ծիծաղ,
Հոգիս քիչ քիչ կը թաղուի անուրջին մէջ այս քնաղ.

Յուշիկ փախչող իրիկուան ծիրանի լոյսն է զըւարթ:

Մ Ի Ս Ս Ա Յ Մ Ն Ծ Ս Ե Ր Ն Յ

Ս. ԷՋՄԻԱՄՆԷՆ կը հաղորդեն մահը Տ. Մակար արքեպիսկ. Բարխուդարեանի, ար-
դիւնաւոր միաբան Մայր Աթոռոյ, Հանգուցեալը 70 տարեկան էր, բնիկ Ղարապաղցի,
երբեմն միաբան Ս. Երուսաղեմի, 1868ին վարդապետ ձեռնադրուած էր Երուսաղեմի մէջ,
հանգուցեալ Տ. Մելքիսեդեկ Սրբազանի հետ, որուն անբաժան ընկերն էր: 1872ին, այս
երկու եկեղեցականները՝ Տ. Մովսէս եպիսկ. Կէօմրիւկճեանի հետ, — այդ թուականին դեռ
նորընծայ վարդապետ, — միաբանական խնդրի մը պատճառաւ թողուցին Ս. Յակոբեանց
վանքն ու միաբանութիւնը և Կ. Պոլիս եկան ուր մտադիր էին վարժարան մը հիմնելու:
1876ին, երբ Մելքիսեդեկ Սրբազան Իզմիրի առաջնորդ ընտրուեցաւ, իր հետ տարաւ Մա-
կար վրդ.ը որ բաւական տարիներ այնտեղ մնալէ ետքը՝ իբրեւ քարոզիչ, լուսարար, և
պահ մըն ալ տեսուչ հիւանդանոցին, իր ծննդավայրը՝ Ղարապաղ վերադարձաւ, բանասի-
րական ու հնագիտական ուսումնասիրութիւններով զբաղելու համար: Արդի Ս. Հայրա-
պետին օրով, Տ. Մակար Վրդ. հրաւիրուեցաւ Լէմբաժին, ուր վարեց լուսարարապետի և
Սինօդի անդամակցութեան պաշտօններ: 1894ին, բարձրացաւ եպիսկոպոսութեան աստի-
ճանի, Բարխուդարեան Սրբազան հմուտ եկեղեցական մըն էր և հրատարակած է տասնի
չափ երկասիրութիւններ: Ունի նաև անտիպ աշխատասիրութիւններ:

“ՄԵՆԱՍԷՐ”ԻՆ ՕՐԱԳԻՐԸ

ԲԵՐԱ, 20 Փետրվար. — Գրական մոռումը յիշատակներու վերադարձնում մը ունեցայ մտքիս մէջ, երբ ստացայ խմբագրութեանդ երկտողը որ կը հրաւիրէր զիս՝ նորէն «գրել» երբեմն Մաքսին մէջ, — վասն զի «աշխատակցիլ» բառը, զոր կը գործածէք, չա՛տ աւելի մեծ իմաստով կը մըռնեմ, որ չի կրնար պատշաճիլ պատահական երեւումներու։ Ի՛նչ աղէկ պիտի ըլլար, եթէ մեր լրագրատեսները քիչ մը ընտրութիւն դնել գիտնային այդ և ուրիշ սովորական դարձած բառերու և բացատրութեանց գործածութեան մէջ որոնք իրենց յարգը կորսնցնել կըսկսին։

Բայց առաջին նամակին առաջին տողերը դիտողութեամբ մը չձանրաբեռնելու համար, կ'անցնեմ ձեր հրաւերին, որ գրական ու լրագրական կեանքի յիշատակներ արթնցուց — կըսէի — մտքիս մէջ, թէ և թարմ՝ հազիւ երկու-երեք տարուան, որոնք սակայն հեռաւոր անցեալի մը տպաւորութիւնը կը թողուն վրաս։ Անո՞ր համար արդեօք, որ գրչի հաղորդակցութիւնս թողած ու մեկուսացած էի այն թուականէն ի վեր ուր՝ ձմեռը՝ «Վառարանիս անկիւնէն» ու ամառը՝ «Վոսփորի ափերէն» կը թղթակցէի Մաքսին։ Շուրջս կը դիտեմ և կը նշմարեմ գրական մեկուսացումներ որոնք իմինիս պէս անարժէք չեն. անցեալ տարի, այս միջոցիս, աշխատակցութեան խոստում մը կամ յուսադրութիւն մը միայն ունեցաք Գր. Զօհրապէն որ գեղանազ աղջկան մը պէս որչափ աւելի խոյս կուտայ գրականութենէն՝ այնքան աւելի կը փնտռուի հոն. ինչո՞ւ հնար չեղաւ ձեզ իրականութեան վերածել այդ յուսադրութիւնը որուն ակնկառոյց սպասեցին Մաքսի համակրողներ, դրասէրներ, ու բոլոր ընթերցողները՝ կրնամ ըսել։ Աւելի բաղդաւոր եղաք Ատրուշանի մասին որ գէթ երկու յօդուածով ռփեց թերթերնիդ, — ուղևորական գրաւիչ տպաւորութիւն մը, որ ինքնատիպ ու խորհրդանշանական գրուածք մըն էր, եւ իմաստասիրական յօդուած մը՝

ո՛չ այն իմաստասիրական տեսակէն որ անմարսելի է ու տաղտկալի. ընդհակառակը, ոսկեզօծուած, համեղցուած խորհրդածութիւններու շարք մը որ այնքան առողջ գաղափարներ կը ներշնչէր կեանքի ապարէզը թեւակոխողներուն։

Այս երկու գրագէտներուն անունները և 1905 տարեշրջանին մէջ Մաքսին նուիրուած գրական, բանաստեղծական և ուրիշ կարեւոր աշխատակցութիւններ, — որոնց կանոնաւոր յիշատակութիւնն ընելու չափ սուր յիշողութիւն մը կը պակսի ինձ, — մտածել կուտան ինծի թէ որքա՛ն միակողմանի ու ինքնագով կը դառնան մեր թերթերը որոնց մեծագոյն մասը, իրենց «Տարեկան Տեսութիւն»ներուն կամ «Գրական Տարի»ներուն մէջ ինքզինքնին, իրենց յօդուածագիրները, իրենց մէջտեղ դրած հարցերը միայն յիշեցին ու պանծացուցին։ Յովհ. Գազանճեանը գտնուեցաւ միայն, եթէ չեմ սխալիր, որ անցողակի պղտիկ յիշատակութիւն մը ըրաւ Մաքսին. ուրիշ գրողներու աչքին, գոյութիւն չունէր կարծես այս հին՝ բայց միշտ թարմ թերթը որ ամէն տարի նորութիւններ կընծայէ իր ընթերցողներուն։ Մինչդեռ, որչափ որ դիտած եմ տարիներէ ի վեր, Մաքսի խմբագրութիւնը համակիր գտնուած է գրական ու լրագրական ամէն գեղեցիկ ձեռնարկի, յարգելով հին ու արժանաւոր գրիչները ու քաջալերելով նորերը, ո՛ր թերթի մէջ ալ որ երևնան անոնք։ Նստսիրութեան զգացումը ո՛չ մէկ ատեն այնքան յայտնի կերպով երեւան կուգայ մեր կարգ մը թերթերու վարիչներուն և անոնց արքանեակ — գրողներուն քով՝ որքան տարեկան տեսութիւններու առթիւ, որոնք չափուած — ձեւուած յօդուածներու կը նմանին աւելի՛ քան թէ ինքնաբոյս և անկախանդ մտքով գրուած քննարու։ «Տեսութիւն» բառը նոյնն է, իրա՛ւ, բայց աղաւաղուած, իր իմաստը կորսնցուցած, այնպէս որ ապագայ բառգիրքներու հեղինակները մեր այսօրուան լրագրական բարձրուն համար յարմարագոյն պիտի սեպեն գործածել «ինքնատեսութիւն»ի պէս բառ մը։

Ինչ հարկ, սակայն, ծանրանալ այս նիւթին վրայ, քանի որ՝ ապահովապէս՝ այս տարուան վերջն ալ միեւնոյն բանը պիտի կրկնուի, միեւնոյն գրիչներուն կողմէ, գուցէ աւելի՛ սեղմ կերպով:

Կըսէի թէ վերջացող շրջանին մէջ նորութիւններ չպակսեցան Մասիսին: Ակնարկել կուզեմ Հակալքողական Մրցման որ մեր լրագրութեան համար բոլորովին եզակի էր ու տեսակին մէջ առաջին: Ամիսներով ամբողջ մեր մամուլը անով զբաղեցաւ, անով հետաքրքրուեցաւ, էջեր, սիւնակներ լեցուեցան. գնահատականներ, քննադատականներ զիրար խաչաձեւեցին. եւ ահա՛, մրցման արդիւնքը հրապարակուելէն ու... մրցանակները բաշխուելէն ետքը, մոռցուեցաւ անոր կարեւորութիւնը, անոր ընկերային—բարոյական օգտակարութեան ճշգտումը. կարգը հեգնութեան ու ծաղրանքին էր որ կանուխէն ծայր տուած էր արդէն Իզմիրէն: Ասոնք բոլորը անօրինակ բաներ չէին բնաւ ու ո՛չ ոք զարմացաւ տեսնուած հակասութիւններուն վրայ, և ամենէն աւելի ո՛չ իսկ այդ հանրագումար մրցման հաստատիչը, Տիար Յովհաննէս Թաւադեան, որ կերեւակայեմ թէ հեռուէն, Ովկէանոսէն անդին, անտարբեր աչքով մը կը բանար մեր թերթերուն ծրարները, ամէն թղթաբերի, առանց բնաւ զբաղելու իր մասին գրուածներովը ու միմիայն հակալքողական յօդուածները քննելով, դատակարարելով ու յանձնելով որո՞նց դատողութեանը որ պէտք էր: Ինքը, վաճառական մարդ, ո՛չ միայն դրամ տրամադրած էր այս մրցման համար, —որ հազուադէպ է մեր մէջ, — այլ նաև գրիչ կը շարժէր, ատեն ատեն հետաքրքրաշարժ նամակներ, գործնական մտքէ բխած յօդուածներ ղրկելով այս կամ այն թերթին, ի հարկին վիճաբանելով ու քննադատութեանց պատասխանելով, —ինչ որ աւելի՛ հազուադէպ երեւոյթ մըն էր մեր առեւտրական դատակարարի մարդոց համար, մանաւանդ առաջնադոյններուն, ինչպէս է Տիար Թաւադեան:

Հնութիւն մը որ նորութեան մը չափ

յարգ ունի, իր լայն ու արժանաւոր բաժինը ընծայուած տեսաւ իրեն, վերջացող շրջանին ալ, Մասիսի մէջ, —այն է մեր նախնեաց լեզուին մշակումը՝ Տիգրան Նլքէնճեանի գրաբար անստգիւտ թարգմանութիւններով, ընտրելագոյն հեղինակներէ: Առանց գրաբարագէտ մը ըլլալու, իմ պարզ ըմբռնումովս, բայց աւելի՛ գրաբարագէտներու ճշմարիտ գնահատման արձագանգները լսելով, կը հաւատամ թէ Մասիսի խմբագրութիւնը նշանակելի ծառայութիւն մը կը մատուցանէ մեր մատենագրութեան՝ այդ քերթուածներուն պարբերական հրատարակութեամբը: Ու մտքիս մէջ, կը նմանցունեմ զանոնք, — որոնք առանց գրականութեան ու աշխարհիկ բանաստեղծութեանց հետ ներդաշնակօրէն զետեղուած տեսնելով Մասիսի միեւնոյն թիւերուն մէջ, — հին ու թանկարժէք գոհարեղէններու որոնք à la mode արդուղարդեբուն հետ զուգորդուելով կը կազմեն ազնուական տիկնոջ մը պերճանքը, իրենց հակադրութեամբը իսկ աւելի՛ յանկուցիչ դառնալով, մինչդեռ հինը ու նորը, առանձին առանձին, նուազ ուշադրաւ ըլլային թերես:

Անցողաբար, այս երկու յիշատակութիւնները եկան գրչիս տակ Տարեկան Տեսութեանց միակողմանիութեան վրայ խօսելու առթիւ, դիտելու համար թէ, գրաբարի տրուած խնամոտ մղումը՝ Մասիսի մէջ՝ և հակալքողական բարերար մրցումը ո՛չ իսկ երկտող նօթագրութեան մը պատուին արժանացան մեր «Տարեկան Տեսութիւն» ճիւղներու քաղուածքներուն մէջ: Ասով, բան մը չկորսնցուցին անոնք սակայն իրենց արժէքէն, վասն զի գրասէր ու ընթերցող հասարակութիւնն է գնահատողն ու դատողը:

Բայց կը տեսնեմ թէ ես ինքս ալ գրական տեսութիւն մը ընելու կը մղուիմ անըզալաբար, մինչդեռ խմբագրութեանդ ինձմէ սպասածը՝ օրուան այժմէութեանց վրայ Իրոնիկ մը կամ Նօթեր են: Ուրեմն դալ անգամ:

ՅԵՐԱՅԻՄ ԲԵՐԱՅԻ

ԳՐՈՒՄԳ ՄԵ

ՈՒՍԱՆՈՂԻ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԷՍ

Ս .

Ինքնաշխատութեան մեծ ակոյեան մը օր մը կըսէր ինձ .

— Դուք դպրոցականներդ ո՞րչափ բարեբաղդ էք : Ձեր տասը - տասներէինգամեայ ուսանողական կեանքին մէջ ընկերներ կ'ուսնենաք , որոնց մէջ կարելի կըլլայ գտնել այնպիսիներ , որոնք ամբողջ կեանքերնուդ տեւողութեան մէջ , ձեր սրտին միշտ մօտիկ , հին ընկերը , բարեկամը , եղբայրը կ'ըլլան : Եւ եթէ անոնց պատճառաւ փոքր հասակնէդ իսկ հասկնաք՝ թէ ամէն երեսնիդ խնդացող անպատճառ ձեր բարիքը ուղող մը չէ , դարձեալ կ'օգտուիք , կանխահաս դառն փորձառութիւնը ունենալով մարդոց վրայ :

Անկէ ի վեր տարիներ անցած են , և շատ անգամ առիթը ունեցած եմ անդրադառնալու այդ խորիմաստ խօսքերուն : Երբեմն ճիշտ գտած եմ իր եղբակացութիւնը , երբեմն ալ՝ հակառակ պարագաներէ աղդուած՝ ոչ իրական . աւելի ճիշդը՝ շատ լաւատես : Սակայն , ինչ որ անկասկածօրէն ուղիղ դատած եմ , այն ալ առաջին խօսքերն եղած են , այսինքն դպրոցական կեանքը ամբողջ ապագայ սերունդի մը հետ յարաբերութեան մէջ կը դնէ մարդս , եւ անուրանալի է որ մարդըս իբր ընկերական էակ և անխուսափելիօրէն ենթակայ կեանքի պայքարը մղելու և դիրք մը գրաւելու իր նմաններուն մէջ , այդ կանուխէն սկսած յարաբերութեանց մէջ բաւական մը ծանօթութիւններ կրնայ համբարել :

Պղտիկ հասակէդ ինքզինքդ կը գտնես տարեկից ամբոխի մը մէջ , որ քեզի պէս կը մտածէ - եթէ երբեք այդ տարիքին մէջ կրնայ մտածել - քեզի պէս կը խօսի , կը վիճի , կը խաղայ , կուլայ ու կը խնդայ : Իրարմէ նախանձել ըլլայ՝ չար կամ բարի կոչուած տեսակէն , զգացումները հասկացողութեանդ աստիճանին համաձայն իրարու վրայ

չափել , ուրիշներու դասերուն օգնել կամ զանոնք պատրաստելէ արգիլել , իրարու հետ քէն ընել , խաղի կամ դաս սորվելու պահերուդ ոմանց հետ գտնուելէ հաճոյք զգալ , ուրիշներէ հեռու մնալու ջանք ունենալ , և դեռ խել մը բաներ վերջապէս - անդդուող րոցեան կեանքի պղտիկ համայնապատկեր մը - այդ դպրոցական կեանքը , որուն անդրադարձած միջոցին , մարդս չկրնար զսպել իր մէջ տաք վերաբերում մը առ այն , վերածնունդը բոլոր սիրուն , աղնիւ , քնքուշ զգացումներու շարքի մը :

Սակայն մանկական նոյն իսկ այդ սիրուն յիշատակներդ միշտ անխառն եղած չեն ըլլար : Ան ալ իր տխուր դրուագները կ'ունենայ : Շատ մը պղտիկ ընկերներ ունեցած ես , ոմանք սիրուն և արդէն բարեկամներ , միւսինիկ եղբայրներ , զորս քանի մը չաբաթ դպրոցը չտեսնելէ վերջ օր մըն ալ փախուք մըն է կը հասնի ականջիդ : « Մեռեր է » կըսեն և դուն դեռ չը կրցած իսկ պտտիկ գանկիդ մէջ սղմցնել ամբողջ ահռելիութիւնը , զոր կը յատկանիչէ այդ բառը , ինքնաբերաբար սոսկում մը կըզգաս , երբ մանկական հետաքրքիր հարցումիդ վրայ , սապէս կը սահմանեն գայն . « Աստուծոյ քովը գնաց » : Մայրդ ըսած է քեզի ամէն օր , թէ Աստուած երկինքն է և ահագին այդ բարձունքին վերելակումը սոսկառիթ վտանգ մը նախագուշակել կուտայ քեզի : Յետոյ , քիչ քիչ մեծնալով , երբ տեսնես թէ փոխանակ երկինք երթալու , քու պղտիկ ընկերդ ցուրտ հողին մէջ դրուած է , սրսփուք մը կըզգաս , դող մը կը պոչարէ քեզ , և օրերով թախծալիր կեանք մը կ'ունենաս : Ինչպէս կրնայիր մտքէդ անցունել այն դեռ անփորձ , չուսճացած , չը կազմուած մտքէդ , թէ պիտի գար օր մը , որ դարձեալ տխուր տպաւորութեանց տակ , տխուր յիշատակներու քրքրումիդ մէջ , երբ այդ շատ կանուխ կորսնցուցած ընկերներդ յիշէիր , պղտիկ տարիքնուն մէջ իրենց կանխահաս վախճանին համար ունեցած զկծեցուցիչ զգացումներդ բոլորովին պիտի փոխուէին , և դուն վշտի ցաւի բաժակը մինչև միջուրը քամելու մօտեցած վայրկեաններդ :

երջանիկ, գերերջանիկ պիտի համարէիր զանոնք որ վարդի մը կեանքը ապրած էին, առաւօտ մը միայն, և նոյնիսկ վարդերէն ալ աւելի երջանիկ եղած թերևս, քանի որ անոնց չափ ալ չէին զգացած, չէին կրցած զգալ կեանքի դառնութիւնները:

Դանի սակայն յիշատակներդ մօտենան գտնուած կեանքիդ սահմաններուն, ընկճող տիրութիւններով ա'լ աւելի շաղախուած կը գտնես զանոնք: Հիմայ պզտիկ վարդենիներ են որ կուգան միտքդ: Այն պզտիկ ընկերներդ քիչ քիչ պատանի եղած են, ոմանք—վայրի վարդեր—մացառներու մէջ անէանալու մշտակայ սպառնալիքէն ա'լ աւելի հոստեպնդուած հոս հոն, պզտիկ փուշերէն ծակծրկուած տերեւները հետզհետէ կը թօթափեն, աւելի կանանչներով, աւելի անաղարտներով պնտուելու համար, ու շատ մը դժուարութիւններէ ետք վերջապէս կրնան ցօղուննին օղին մէջ ցցել: Հոն շատ ժամանակէ ի վեր ամբողջովին չը վայելուած արեւին, լոյսին տակ անօրինակ աճում մը կունենան, կը մեծնան ու կ'ուռճանան, թեւեր կերկնցնեն ու ահա իրենց խանձարուրը եղած այդ մացառներու կոյտը իրենց ծաղիկներով, բուրումնաւէտ վարդերով կը ծածկուի:

Ու դուն, իրենց աղքատ ու խոնարհ ծրնունդնին մոռցնել տուող, բարգաւաճ, բարեբաստիկ ընտանիք մը կազմող հին ընկերներուդ սիրուն զաւակները, այդ բուրումնաւէտ վարդերը տեսած միջոցիդ, երբ պէտք էր մանկական յիշատակներուդ մէջ ամէն ինչ վարդազոյն տեսնէիր, երբ միայն այդ սահմանին մէջ պէտք էր պարփակէիր բոլոր զգացողութիւններուդ հասողութիւնը, անդիմադրելի անխուսափելի վերայիւումը կը սաւառնի սակայն այնպիսի կայքերու մէջ՝ որոնք աւելի բազմաթիւ են և կը ջնջուի մէկէն այն խուսափուկ վայրկենին երջանկութիւնը զոր ունեցար ծիծաղկոտ տեսարաններու մէջ թափանցած մնալ ուզած տեսնդ:

ՄԱՏԹԵՈՍ Գ- ԷՊԼԻՂԱԹԵԱՆ

ԲԵՐԱ

ՄԱՍԻՍԻ ընդհատման միջոցին, ենթադրական բանագործութեան խնդիր մը բանալէ՛հի առարկայ եղաւ՝ ծանօթ հրապարակագիր Արամ Անտոնեանի և Պ. Տիրան Չրաքեանի միջև, Արեւ. Մամուլի մէջ, որու մասին Մանգոլմե և Հանգազիսակ ալ խմբագրականներով իրենց տեսութիւնները պարզեցին: Թէեւ այլեւս խնդիրը կորսնցուցած է իր այժմէութիւնը և Արամ Անտոնեանի ջանքախիչ յայտարարութիւնը առջի վայրկեանէն կը բաւէր խնդիրը փակելու, բայց որովհետեւ Մանսի խմբագրութիւնն ալ վկայութեան կոչուեցաւ հրապարակով, մեր վրայ ալ բարոյական պարտականութիւն մը կը ծանրանայ իրողութիւնը ճշդելու:

Պ. Տիրան Չրաքեանի ձեռագիրը, մեր խմբագրատան դարակներուն մէջ ժամանակ մը մնալէ ետք, վերադարձուած է իրեն, առանց ո'չ մէկուն ցոյց արուած ըլլալու, առանց ո'չ մէկէն կարդացուած ըլլալու, բաց ի բնականաբար՝ թերթին խմբագրէն: Այս վաղուվսքի մահուան լուրին հասնելէն անմիջապէս ետքը՝ խմբագրութեանս հրաւերով մեր աշխատակից և բարեկամ Արամ Անտոնեանի դրած այնքան գեղեցիկ յօդուածներու շարքէն ետքը, աւելորդ համարած էինք հօւրընկալել Պ. Տիրան Չրաքեանի գրուածքը: Այս է ամբողջ իրողութիւնը:

Ընթերցող հասարակութիւնը, որ այնքան ակորժով կը կարդայ միշտ Անտոնեանի գրական ու հրապարակագրական արտադրութիւնները և գնահատած է անոր մտքին բեղմնաւորութիւնը՝ ո'չ իսկ կրնար վայրկեան մը կասկածիլ արդէն թէ անիկա պէտք ունեցած է որ և է պարոնի մը ձեռագրէն ներշնչուելու կամ բան մը ընդօրինակելու: Այս է նաև Անտոնեանը մօտէն ճանչցող մեր գրագէտներուն ու մեր մամուլի աշխատաւորներուն համոզումը, զոր խախտելու անգոր եղանակ Պ. Տիրան Չրաքեանի մանուածապատ ու երկդիմի բացատրութիւնները:

Հարկ է անգամ մըն ալ կրկնել, թէ բացարձակապէս սուտ և սխալ է որ Անտոնեան տեսած ըլլայ Պ. Տիրան Չրաքեանի ձեռագրին ծայրն անգամ: Այս տեսակ ենթադրութիւն մը ընելն իսկ ամօթ է:

ԳԵՂԻ ԿԵԱՆՔԷՆ

ՀԱՐՍ ՈՒ ԿԵՍՈՒՐ

Երկուքն ալ նստեր էին թոնիրին շուրջը, դէմ դէմի: Հարսը գարեխմորը ձեռքով կը լայնցնէր ու կեսուրին կուտար: Կեսուրը բարաթին(*) վրայ կը տարածէր ու թոնիրին կողը կը փակցնէր: Իսկ առատ կրակը կեփէր, կը կարմրցնէր գարեհացերը ու խիստ հաճելի կ'ընծայէր անոնց աչքերուն:

Հարսը գլուխը կախած, դանդաղօրէն բաներ մը կը խօսէր:

— Հիմա քաղաքներուն մէջ, կ'ըսէր ան, ամէն մարդ դեռ պառկած կ'ըլլայ: Այո, այդ այդպէս է: Այն տեղի կիները բան մըն ալ չեն ըներ, պառկելով, զրոյց ընելով կ'անցընեն օրերնին: Այդ ես չեմ գիտեր, բայց այսպէս կ'ըսեն: Թամամին աղան պատմեր է կնոջը:

Կեսուրը որ նմանապէս գլուխը կախեր էր, վերցուց, ու հարցուց: Յայտնի էր որ հետաքրքրուած էր:

— Ո՛վ ըսիր:

— Թամամին աղան, կրկնեց հարսը:

Երկու կիները իրարու նայեցան, նշանակալից նայուածքով մը, ու գլուխին շարժեցին: Բան մը չըսին, բայց խորհեցան թէ ի՞նչ տեսակ կեանք մըն էր որ հոն կը վարէին, և ի՞նչքան հաճելի...: Երկուքն ալ վերին աստիճան կոշտ և խեղճ զգեստներ էին հագած. — տեղական էնթարի, կարմիր գօտի: Հարսը ճակատն ու բերանը եազմաներով ծածկած էր, և միայն աչուրները բաց ձգած էր: Իսկ կեսուրին աչացաւ երկու օրէի վեր սկսած էր. հեռուն չէր կրնար տեսնել, բայց դարձեալ կ'աշխատէր:

— Բա՛ա... բա՛ա... բառաչեց կով մը քովի ախոռէն, նոյն պահուն:

Երկու կիները դադրեցան պահ մը խօսելէ ու մտիկ ըրին, չարաչուշտկ երեւոյթով մը: Յետոյ, կեսուրը «ի՛նչ կուզէ» մըթմըթաց հարսը ուշ չի դրաւ ու ծռեցաւ աշխատելու:

(*) Կարճ կոթով տեսակ մը բոլորչի թիթոնիբի համար:

Եփած գարեհացերնին պարկի մը վրայ կը շարէին եւ անոնց թալմ ու անուշ բոյրը տընակին մէջ կը տարածուէր:

— Հարկաւ երկու շաբաթ գոնէ կերթայ այս անգամ հացը, սկսաւ վերստին խօսիլ հարսը: Ինչո՛ւ չէ. քիչ ալիւր էր...: Զեռ գիտեր ի՞նչպէս շուտ կը հատնի: Երբ կեփես ու կը շարես գարեհացերը, կը դիտես: Ահա գին բան կերեւայ աչքիդ: Կը մտածես թէ ե՛րբ պիտի ուտես այսչափը: Յետոյ քանի մը օր ետք կերթաս, կը տեսնես բան մը չէ մնացեր:

Թոնիրին բոցը վերջացած էր արդէն, բայց առատ կրակը կը լուսաւորէր գիւղական տունին այդ մասը: Պատին անկիւնը խոտէ բազմոց մը կար. դեռ կիսկատար գուլպայ մը ու կծիկ մը նստեր էին վրան. շուրով լեցուն հողէ աման մը գարեհացերուն քով դրած էր մէկը: Իսկ ձեղունը այնքան բարձր էր որ մարդ ինքզինքը խոր գուրի մը մէջ կը կարծէր և չէր կրնար գիտնալ թէ ի՛նչ կ'անցնէր դուրսը: Տնակին միւս կողմը, քիչ մը անդին, թոնիրին կարմորակ լոյսը հետզհետէ սեւի կը փոխուէր, և վերջապէս սոսկալի խաւարի մը մէջ կը թաղուէր ամէն բան: Յայտնի չէր թէ ի՛նչ կար հոն. պատն էր, թէ դեռ տնակը կ'երկարէր: Տնակը պատուհան չունէր արդէն, ձեղունէն պզտիկ ծակ մը կար, որ սակայն աշունէն ի վեր գոցուած էր:

— Բա՛ա... բա՛ա... բառաչեց կովը քովի ախոռէն:

Երկու կիները վերստին դադրեցուցին խոսակցութիւննին ու մտիկ ըրին: Զեռքերնին ծունկերնուն վրայ դրած, անշարժ, անոնք դիտեցին բուխերիկին սեւ ծակը, ձեղունին հաստ գերանները, յետոյ իրարու երես, յետոյ անհելի խաւարը որ քիչ մը հեռուն կը սկսէր, — և սարսուպին:

— Աչքե՛րս, աչքե՛րս, մըմնջեց պառաւը. Ա՛ստուած, դուն ողորմէ, աչքերս:

Գարեհաց մը որ լաւ չէր փակած, կրակին մէջ խնկաւ: Պառաւը ակիշով անմիջապէս վեր հանեց, բայց արդէն կէսէն աւելին այրած էր: Ի՛նչքան սոսկալի օդ մը կար, յայտնի էր. քրքիւնաւ դաւաճ երբեմն կը դուրսէր:

և ճեղքերէն հովը շարունակ ներս կը խուսէր: Անոնք չէին գիտեր թէ ձիւնը դեռ կուգար, թէ վերջացած էր: Պառաւին աւանջին կը թուէր թէ խորհրդաւոր, արհաւիրակից ձայներ կը հասնէին: Ան չէր կրնար որոշել սակայն թէ ուրկէ՞ կուգային այդ ձայները: Երբեմն մութին մէջէն կը կարծէր, երբեմն անակէն դուրս, հեռու տեղերէ, յետոյ նորէն մութին մէջէն. և այսպէս շարունակաբար:

— Ի՞նչ կայ հոն, մթմթաց պառաւը, մութին մէջ նայելով:

Հարսն ալ մութին մէջ նայեցաւ, բայց ո՛չ բան մը տեսաւ, ո՛չ ալ բան մը լսեց:

— Գուրտ է, ցուրտ, մթմթաց պառաւը նորէն, Աստուած ողորմի՛ երախայիս. ո՛ւր մնաց արդեօք խեղճը հիմա:

Երկու կիները իրենց «երախան» յիշեցին, յետոյ ձիւն — ձմեռը ու յուզուեցան: Անոնք կը կարծէին թէ իրենց «երախան» կարօտէն կը նեղուէր, քանի որ ճամբորդութեան մէջ էր: Պառաւը լացաւ, իսկ հարսը ամացաւ կեսուրին առջև իր յուզումը յայտնել:

— Մի՛ լար, ըսաւ հարսը վերջապէս, կեսուրը դիտելով, աչքերդ աւելի գէշ կըլլան, մի՛ լար, մեղք ես:

Յանկարծ տանիքէն օտնաձայներ լսուեցան: Դրացի մըն էր որ կ'անցնէր անշուշտ ու իր տունը կերթար: Գիւղական տնակները բոլորն ալ արդէն իրարու կից էին: Բայց օտնաձայները շատ տկար կերպով կը հասնէին իրենց ականջին, տանիքը չափազանց բարձր ըլլալուն... հետզհետէ անոնք աւելի տկարացան ու վերջապէս ա՛լ չի լսուեցան:

— Բա՛ւ... բա՛ւ... բառաչեց կովը քովի ախոռէն,

Կեսուրը — «Հա՛րս, քիչ մը խոտ տար» ըսաւ, բայց հարսը երեւի բանի մը վրայ կը խորհէր: Նոյն պահուն դուռը բացուեցաւ ու նրբանցքը լուսաւորուեցաւ. ցուրտ հով մը խուսեց ներս: Հարս ու կեսուր չէին կրնար տեսնել դուռը: Ո՞վ էր արդեօք, և ի՞նչ կուզէր: Ձէին գիտեր թէ հո՞վն էր թէ մարդ. — ու վերստին սարսռացին:

— Ո՞վ է... պոռաց պառաւը, քիչ ետք:

Ձայն չեւաւ, Հովը կը խուսէր եւ նրբանցքը լուսաւորուած էր: Պառաւը խաչակնքեց ու աղօթք մը մըմնջեց, իսկ հարսը պատահաւորեցաւ ելնելու, երբ ամբողջովին ձիւնով ծածկուած ծերուկ մը, ճերմակ ու երկար մօրուքով, և կարմրած կոպերով, երեւցաւ: Ծերուկ Գաբօն էր:

— Թոյլ տուր, Նանա բաջի(*), ըսաւ ան, վարանոտ ակնարկ մը նետելով, երախայիդ սիրուն, թոյլ տուր որ տաքնամ:

Երկու կիներուն հաճելի եկաւ ծերուկին խօսքը, յուզուեցան ու տեղ տուին որ նըստաւ: Ան սառած ձեռքերը տաքցուց ու մըմնջեց.

— Գուրտ է, ցուրտ, Նանա բաջի:

Պառաւը չորս կլոր գարեհաց տուաւ եւ ծերուկը անյայտացաւ, անշուղ, առանց բան մը ըսելու: Ուշ ատեն միայն գիտցան որ ծերուկը չիկայ, բայց խօսք մըն ալ չըրին այդ մասին:

Կովը նորէն բառաչեց, իրարու վրայ երկու անգամ: Պառաւը հրամայեց եւ հարսը թողուց խմորը, անութով խոտ առաւ ու ախոռ գնաց: Մութին մէջ կը գայթէին անոր ոտքերը եւ անդամները տեսակ մը անշարժութիւն էին ստացած: Ձէր կրնար քալել: Եւ վերջապէս երբ լոյսը տեսաւ, պիտի իյնար, եթէ ախոռին պատին չի հանդպէր: Կը մտէր: Ան խոտը տուաւ, բայց յայտնի էր որ ոչ կովին, ոչ ալ ցուրտին վրայ կը խորհէր, այլ բոլորովին ուրիշ բանի մը վրայ: Որովհետեւ, յանկարծ կեցաւ ախոռին սեմին վրայ, ու իր շատ միամիտ աչքերը կէտի մը յառած՝ ըսաւ ինքնիրեն.

— Երանի՛ անոնց... ինչքան հաճելի ըլլալու է այդ կեանքը...

Դուրսը ձիւնը դադրած էր, բայց նորէն սաստիկ ցուրտ կար: Փողոցին մէջ, որ կանոնաւորապէս կ'երկարէր, գիւղական տնակներուն վրայ, ինչպէս պարտէզները, ինչպէս հեռաւոր լեռները, ձիւնը ծածկած էր: Մարդ չէր տեսնուեր եւ անուշ, մելամաղձոտ լուսթիւն մը կը տիրէր ամէն կողմ: Բուխերիկէ մը յամբարէն ծուխ կը բարձրանար: Նոյն պահուն ագռաւ մը թռաւ ու կօինչ մը արօձակեց:

ՅԱԿՈԲ ՓԱՓԱԶԵԱՆ

(*) Բոյր.

ՈՎԿԻԱՆՈՍԻՆ ՔՐԻՍՏՈՍԱՐ

Այս տարի Սէն—Վալէրիէն ձկնորսութեան դացողներէն շատերը խղճուեցան ծովուն մէջ, իրենց մարմինները գտնուեցան ծովեզերքէն ուր բերած նետած էին ալիքները անոնց նաւերուն բեկորներուն հետ։ Ինչ որ չարունակ դէպի եկեղեցի տանող լեռնոտ ճամբուն վրայ տեսնուեցան դադաղներ որոնց կը հետեւէին այրի կիները լալով իրենց սե գլխանոցին տակ, Աստուածաշունչի կիներուն պէս։

Ձկնորս ժան Լընօէլի և իր Տէզլիէ տղուն մարմիններն ալ դրին այն պահարանին մէջ որուն կամարին տակ դեռ նոր իբր Աստուածածնի նուէր կախած էին նաւ մը իր բոլոր կազմածովը։ Արդարեւ աստուածավախ մարդիկ էին ասոնք եւ Կիյեօմ Դրիւֆէր՝ Սէն—Վալէրիի ժողովրդապետը՝ արձակումը տալէ վերջ ըսաւ արտասուալից.— «Մինչեւ հիմայ Աստուծոյ սուրբ դատաստանին սպասելու համար ժան Լընօէլէ եւ իր Տէզլիէ որդիէն աւելի ազնիւ եւ քրիստոնէսայ մարդիկ չեն թաղուած սուրբ հողին մէջ»։

Եւ նաւերը կ'ընկղմէին իրենց նաւավարներով, որ չէր անցներ որ ովկէանոսը նաւերու բեկորներ չի նետեր ծովեզերքը, առտու մը դեռափի տղաք տեսան ծովուն բացերը պառկած մարդու մը ձեւը։ Յիսուան էր մարդու մը մեծութեամբ բարձր քարի վրայ քանդակուած և ճիշդ բնական գոյներով ներկուած. գեղարուեստական հին գործ մը կը թուէր։ Բարին Աստուած կը ծիար ջուրին վրայ, բազուկները տարածած. զայն շտապք քաշեցին եւ Սէն—Վալէրի տարին։ Ծակտին շուրջը փուչէ պսակ մը կար եւ ոտքերն ու ձեռքերը ծակուած էին. սակայն դամբը ինչպէս նաեւ խաչը չի կային։ Բազուկները դեռ բաց՝ օրհնելու համար, ձիւղայնպէս ինչպէս տեսած էին զայն Յովսէփ Արեմաթացի եւ սուրբ կիները զայն պատանքած ատեննին։ Երբ զայն ժողովրդապետին տարին, ըսաւ «Փրկչին այս պատկերը

հին գործ մըն է եւ անտարակոյս զայն չի նողը շատոնց ի վեր մեռած է, թէեւ Ամիէնի եւ Բարիզի վաճառականները հարիւր ֆրանքի եւ աւելի սքանչելի արձաններ կը ծախեն, սակայն պէտք է խոստովանիլ որ հին արհեստաւորներն ալ արժանիք ունին։ Ամէնէն աւելի ուրախ եմ սակայն մտածելով որ եթէ Յիսուս Քրիստոս ձեռնաբաց եկած է Սէն—Վալէրի, անտարակոյս այնքան դժբաղդու թիւններ կրող այս գեղացին օրհնելու եւ ըսելու համար է թէ կը դժայ այդ խեղճ մարդոց վրայ որոնք ձկնորսութեան կ'ելլեն ի վրաս իրենց կեանքին. այս այն Աստուածն է որ ջուրերուն վրայէն կը քալէր եւ կ'որհնէր Կեփասին ուղկանները։ Եւ Պ. Դրիւֆէր ժողովրդապետը Քրիստոսը մայր խորանին ծածկոյթին վրայ դնելէ վերջ, Լըմէր ատաղձագործին կաղնեփայտէ խաչ մը ապսպրեց։

Երբ խաչը շինուեցաւ, Քրիստոսը անոր վրայ դամեցին նոյի նոր դամբով և զայն ղետեղեցին պահարանին մէջ։

Այն ատեն տեսան որ իր աչքեր լի էին ներումով և կարծես թաց՝ երկնային գլխով թիւնով մը։ Խաչափայտին ղետեղման ներկայ եղող եկեղեցւոյն հոգաբարձուներէն մէկը աստուածային ղէմքէն վար արցունքներու հոսիլը տեսնել կարծեց։ Յաջորդ առաւօտուն երբ ժողովրդապետը ձայնաւոր տղուն հետ եկեղեցի մտաւ պատարագելու համար, շատ զարմացաւ տեսնելով խաչը պարապ և Քրիստոս խորանին վրայ պառկած։

Պատարագէն անմիջապէս վերջը ատաղձագործը կանչել տուաւ և հարցուց թէ ինչո՞ւ համար Քրիստոսը խաչին վրայէն հաներ է, բայց ատաղձագործը պատասխանեց թէ ինք բնաւ չէր դպած անոր։ Պ. Դրիւֆէր հարցաքննելէ վերջ լուսարարը և ժամկոչները, վստահ եղաւ որ ոչ ոք մտած էր եւ կեղեցի, Քրիստոսի խաչին վրան ղետեղուելէն ի վեր։

Այն ատեն զգաց որ հրաչք մըն էր ասիկա և սկսաւ խոհեմութեամբ մտածել։ Յաջորդ կիրակին քարոզին մէջ խօսեցաւ այս մասին և հրաւիրեց ժողովուրդը որ առաջ

Հինէն աւելի գեղեցիկ խաչի մը շինութեան համար նուէրներ ընեն, որպէս զի աւելի արժանի ըլլայ կրելու Բրիստոսը:

Սէն—Վալէրիի աղքատ ձկնորսները կըրցածնուն չափ ստակ տուին ու այրինները իրենց մատանինները բերին, անանկ որ Պ. Դրիւֆէր կըրցաւ անմիջապէս Ապպըլիլ երթալ սե փայտէ փայլուն խաչ մը ապսպրելու համար, վրան ալ ոսկեզօծ տառերով Յ. Ն. արձանագրութեամբ տախտակ մը: Երկու ամիս ետք զայն դրին առաջին խաչին տեղը և վրան գամեցին Բրիստոսը:

Բայց Յիսուս զայն ալ ձգեց և իրիկուն ըլլալուն պէս գնաց խորանին վրայ տարածուեցաւ:

Ժողովրդապետը առտուն զայն հոն գտնելով ծունկի վրայ եկաւ և երկար ատեն աղօթեց: Այս հրաշքին լուրը շրջակայքը տարածուելով, Ամիէնի կիները հանգանակութիւն ըրին Սէն—Վալէրիի Բրիստոսին համար և Պ. Դրիւֆէր Բարիզէն ստակ և դահարեղէններ ստացաւ. բարձրատիճան տիկին մըն ալ աղամանդակուող «իրտ մը շրկեց, Բոլոր այս ստակով և գոհարներով Սէն—Սիւլբիս փողոցի ռսկերիչ մը երկու տարուան մէջ ոսկիէ և թանկագին քարերով պնտուած խաչ մը շինեց որ մեծ հանդիսաւորութեամբ զետեղուեցաւ Սէն—Վալէրիի եկեղեցին 18. տարւոյ Զատիկի երկրորդ կիրակին: Բայց ցաւազին խաչը փախաւ այս այնքան պերճ խաչէն ալ և նորէն գնաց տարածուեցաւ խորանին սպիտակ կտաւին վրայ:

Զայն չվշտացնելու համար այս անգամ զայն հոն ձգեցին, և երկու տարիէ աւելի հոն կը հանգչէր երբ ժան Բայետի տղան ըսաւ ժողովրդապետին թէ ծովեղբւրքին վրայ գտած է Տիրոջը ճշմարիտ խաչը:

Ժան արդար մէկն էր, և որովհետեւ իր ապրուստը ճարելու համար այնքան խելք չունէր, գիտալով իրեն վրայ հաց կուտային: Սիրուած էր ամէնէն, որովհետեւ մէկու մը գէշութիւն չէր ընել, սակայն անվերջանալի կերպով կը խօսէր, թէ և ոչ ոք մտիկ կընէր իրեն:

Սակայն Պ. Դրիւֆէր որ Ովկէանոսի Բրիս-

տոսին խորհուրդին վրայ մտածելէ չէր դադարած, զարմացաւ խեղճ անխելքին ըսածին վրայ և լուսարարին և երկու ժամկոչներուն հետ գնաց այն տեղը ուր տղան կըսէր թէ խաչ մը տեսած է, հոն գտաւ երկու տախտակ որոնց վրայ գամեր կային զորս ծովը երկար ատենէ ի վեր հոն նետած էր և որոնք յիշաւ խաչ մը կը կազմէին:

Նաւաբեկութեան մը մնացորդներն էին ասոնք և դեռ այդ տախտակներէն մէկուն վրայ կը նշմարուէին երկու սե ներկուած գիրեր ժ. մը և Լ. մը, անտարակոյս բեկորն էր նաւակին ժան Լընօէլի որ հինգ տարի առաջ ընկղմած էր իր Տէգլերէ որդւոյն հետ:

Այս տեսնելով լուսարարը և երկու ժամկոչները սկսան խնդալ խեղճ տղուն վրայ որ նաւի մը բեկորները խաչ մը կը կարծէր: Բայց ժողովրդապետը արգիլեց զանոնք: Ովկէանոսի Բրիստոսին այդ ձկնորսներուն մէջ գալէն ի վեր շատ մտածած և աղօթած էր. անհուն գթութեան խորհուրդը սկսաւ երեւիլ իրեն, ծունկի եկաւ աւազին վրայ, «հոգեոց» կարդաց մեռնողներուն համար, յետոյ հրամայեց ժամկոչներուն և լուսարարին որ այդ բեկորները ուսերնուն վրայ առնելով եկեղեցի տանին: Վերցուց Բրիստոսը խորանին վրայէն, նաւին բեկորներուն վրայ դրաւ և իր իսկ ձեռքով զայն անոնց վրայ գամեց ծովէն ժանգոտած գամերով:

Իր հրամանով յաջորդ օրունէ սկսեալ ոսկիէ և թանկագին քարերով պնտուած խաչին տեղը դրուեցաւ: Ովկէանոսի Բրիստոսը անկէ չէ բաժնուած այլեւս: Ուզեց մնալ այն փայտին վրայ ուր մեռած են ձկնորսները՝ իր և իր մօր անունը տալով եւ հոն իր սուրբ եւ ցաւազին բերանը կիսաբաց կը թուր ըսել «Իմ խաչս շինուած է մարդոց ամէն նեղութիւններէն, որովհետեւ ես ճշմարտապէս աղքատներու եւ դժբաղդներու Աստուածն եմ»:

ԱՆԱՊՈՒ, ՅԲԱՆՍ

Թարգմ. ԳԱՌԵԿ ԹՈՒՂԱՃԵԱՅ



ԿԱՆԱՑԻ ԳԵՂԱՐՈՒԵՍ

Պոլսոյ, և մանաւանդ Բերայի գեղեցիկ սեռը մոռցած չէ այն Յուդահանդէսները զորս Սինկէր Ընկերութիւնը յաջորդաբար կազմակերպեց, նախորդ տարիները, իր կեդր. Տընօրէնութեան սրահներուն մէջ, հանրութեան առջև պարզելով իր մեքենաներուն արտադրութիւնը եղող նրբահիւս գործուածքներու ճոխ պէսպիսութիւն մը։ Կանացի գեղարուեստի սիրահարներուն համար ճշմարիտ հաճոյք մը պիտի ըլլայ իմանալը, թէ նոյն Ընկերութիւնը կազմակերպելու վրայ է նոր Յուդահանդէս մը որուն գլխաւոր հրապոյրներէն ու նորութիւններէն մէկը պիտի ըլլայ՝ միմիայն արուեստագէտ և ամաթեօզ կիներու ձեռքով ասեղնագործուած գեղարուեստական առարկաներու յատուկ մասնաւոր Սալոն մը։

Ահա՛ եզական ու գեղեցիկ առիթ մը զոր կընծայէ Սինկէրի Տնօրէնութիւնը փափուկ սեռին, իրենց գեղարուեստական ճաշակն ու ճարտարութիւնը երեւան բերելու և գնահատել տալու, Սինկէրի մեքենաներու վրայ բանուած իրենց ասեղնանկարները ցուցադրելով այդ մասնաւոր Սալոնին մէջ։

Սինկէր Ընկերութիւնը փափագելով հարկ եղած ամէն զիւրութիւն ընծայել այն տիկիններուն և օրիորդներուն որոնք կը փափագին մասնակցիլ այս ցուցադրութեան, անոնց տրամադրութեան ներքեւ կը դնէ իր մասնագէտ պաշտօնէութիւնը, որուն հետ կարելի է խորհրդակցիլ ամէն օր, բաց ի կիրակիէ, Ընկերութեան կեդր. Տնօրէնութեան գրասենեակը, Բերա, ինչպէս նաև հոն գտնուող Զեռագործի Սրահներուն մէջ, ուր փափագողները պիտի կրնան բանիլ իրենց ձեռագործները, Ասեղնագործութեան ճիւղին Տնօրէնուհիին հսկողութեան ներքեւ։

Հայ գեղեցիկ սեռին բնածին ու աւանդական ձիրքերէն մէկը եղած է ձեռարուեստը և մանաւանդ ասեղնագործութիւնը զոր փամանակին կատարելագործութիւններուն համընթաց պահած է միշտ, և կը սիրենք յուսալ թէ ներկայ առիթէն ալ օգտուիլ փափագող Հայուհիներ պիտի գտնուին, ի յայտ բերելու համար իրենց մատներուն ճարտարութիւնը։

ԶՈՐԿԸ ԾՈՂԷՆ ՊՈՐԲՍ

Կաղմով վատառողջ, ջիղերով տրկար Մեծ ու փոքրերուն յաւէտ օգտակար Բուժիչ, կաղաւթիչ դեղ մը անուանի յետէ կայ՝ ձրկան զուտ իւղն է անի. Եւ հրաշագործ այդ ձուկն է Մօրիւն իր իւղն ըմպողը կը դառնայ կորիւն։ Կուտայ ախորժակ, ոյժ, քուն, և իսկոյն կարմրին այտեր խնձորի հանգոյն։

— Բայց աւա՜ղ որ իւղն այդ Մօրիւն ձրկան Անխաղախը հոս ծախողներ քիչ կան...

Լաւագոյն տեսակն անոր, քաղցրահամ, Շուէտի եզրերէն չիտակ, այս անգամ Բերել տըւած է Լեոն Կիւմիւշեան Որ՝ ընթացքին մէջ այս ներկայ ձմրան, իր դեղարանի յաճախորդք ամէն

Ուղածնուն չափ գան, առնեն ու խըմեն

Եւ ինչպէս ամրան հեղձուցիչ տաքուն

«Միջատասպան»ով զըտան անուշ քուն,

Ձմրան ցրտաշունչ խիստ օրերուն ալ

Կարենան առողջ կենցաղ ունենալ,

Եւ միշտ ստիպուին միայն դիմելու

Առ Լ. Կիւմիւշեան ի Զարըգարու։

Կ. ՊՈԼԻՍ

Արուարձաններէ ու գաւառներէ գնել փափաքողներուն՝ ընդփոյթ կը շրջուի յանձնակատարներու միջոցաւ։

ԳԱԽԱՌԱՅԻՆ մեր այն բաժանորդներէն ու գործակալներէն որոնք 1905 տարւոյ բաժանորդագրութենէ պարտք ունին մեզ տակալին, կը խնդրենք որ այլեւ յօժարին շրջակելու։ Յատկապէս կը յիշեցնենք Սեբաստիոյ մեր գործակալին՝ նախորդ շրջանի հաշիւներուն կարգադրութեան ստիպողութիւնը, գանձուած բաժանորդագրիներուն առաքումով։

Հիմնադիր—Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

Տէր եւ Տնօրէն—ՏՈՒՔԹ. ԵԴՈՒԱՐԴ ՄԱՍԻՍ

Տպագրութիւն ԱՇԽԱՏԷՔ Օրագրի



ՌՕՍԻԱ-ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ



ՀՐԴԵՀ. ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ ԵՒ ԱՐԿԱՇՔ

1881 մարտ 20-ի Կայս. Ուժազով արտոնուած

Կեդրոնատեղին Բեդերսպուրկ, իրեն յատուկ չէնք

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութեան կ'ընդունի ՀՐԴԵՀԻ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆ ՎՏԱԳՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱՇՆԵՐՈՒ ԴԷՄ,

ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ Կառուելուն դէմ:

Ընկերութեան դրամագլուխը, ամբողջապէս վճարուած

10,666,666 ֆրանք

Երաշխաւորութեան գումար աւելի քան

149,852,000 *

Ընկերութեան ապահովագրողներուն վճարուած դրամա-
գլուխ եւ շնասուց հատուցում

355,840,000 »

1903 տարւոյ մէջ գանձուած ապահովագրին եւ տոկոս

64,553,800 »

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Ազարեան

խան, Վոյվատա, Ղալաթիա:

1-10

ԱՌԻԹԵՆ ՕԳՈՒՏ ՔԱՂԵԼ

Վ Ա Ճ Ա Ռ Ա Տ Ո Ւ Ն

Հ Ե Ր Ճ Ա Յ Ի



ԱՊԱՌԻԿ ԵՒ ԿԱՆԽԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

Հէրճայի վաճառատունը՝ գտնարդէններու, սոփի եւ արծաթ չգործերու, գազանի, պատի եւ քոնսրի ժամացուցներու մասնաւոր վաճառատունն է: Իր ազգագիր լաճախարդներուն վաճառութենէն քաջալերուած՝ այս անգամ կը փութայ լաւատեսել թէ ումէն եղանակի լաւակ վերջին նորաձեւութեան վրայ պատշաճ ունի առանց, կանանց եւ աղայոց համար ամէն տեսակ հագուստներ ու ալճանի համար մաշկապ վերաբեւաներ, նաեւ ճերմակեղեններ, ֆաթեղեններ եւ թօռֆեններ ու մանրակեան կօշիկներ: Ունի նաեւ կակորատի, ձեղունի լամբաններ, մանճակայներ, երապակեան ու անգիրակեան գար, գեր, գեանի մաշկապներ, կրամօֆաներ ու պիտիքլէթներ՝ ամենավերջին կառարելու թիւներով:

Հէրճայի վաճառատունը իրականապէս ու լայնօրէն շահած է հանրութեան վստահութիւնը եւ գոհախոհութիւնը իր ապրանքներուն ազդեցութեան եւ սոփիներու մաքրութեան, ձեւաւորութեան եւ ամենալաւ համար:

Այս ամէնուն արդեալ արժէքին վաճառումն է

ԱՊՐԱՊ ԱՊՐԱՊ ԵՒ ԱՊ

Միայն թէ գնա ու ապրանքին հարկերին 20ը կանխիկ. իսկ մնացեալ գումարին համար շաքարօկոն հարկերին 5 վճարմամբ պատրաստ է հալթալթել:

Վաճառատունն հառառուած է

ՄԵՄ-ՇՈՒԿԱՅ. ՈՍԿԵՐՉԱՅ ՄԵՄ ՓՈՂՈՑ ԹԻՒ 13

Անգամ մը այցելել բուսական է համարուելու համար թէ՛ Հէրճայի անմրցելի կազմակերպութեամբ մը ի վիճակի է այսօր գոհացնել իր ամէնէն դժուարագոյն լաճախարդները: Կանխիկ գնողներու նամար հարկերին 5 զեղչ:

Սակարկուքիւն չկայ:

Երբ-բայեւ վճարմանը համար հաւաքիչներ միշտ պատրաստ են:

1-10



UNITED STATES OF AMERICA

DEPARTMENT OF THE INTERIOR

BUREAU OF LAND MANAGEMENT

TO THE SECRETARY OF THE INTERIOR
FROM THE DIRECTOR OF THE BUREAU OF LAND MANAGEMENT
SUBJECT: [Illegible text]

REPORT OF THE

COMMISSIONER

OF THE

LAND MANAGEMENT

FOR THE YEAR 1900
[Illegible text]

AND

FOR THE YEAR 1901
[Illegible text]

THE
OFFICE OF THE
SHERIFF
OF THE COUNTY OF
SHERBORN
HANTS.



1844

THE

OFFICE OF THE

SHERIFF

OF THE COUNTY OF

SHERBORN

HANTS.

THE

OFFICE OF THE

SHERIFF

OF THE COUNTY OF

SHERBORN

HANTS.

THE

OFFICE OF THE

SHERIFF

OF THE COUNTY OF

SHERBORN

HANTS.

THE

OFFICE OF THE

SHERIFF

OF THE COUNTY OF

SHERBORN

HANTS.

THE

OFFICE OF THE

SHERIFF

OF THE COUNTY OF

SHERBORN

HANTS.



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը սեննայ, որովհետեւ լաւ մեքենա մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ զժգոնութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է: Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Է Ր

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, ուսի ու ուսի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

Սինկէրի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկէր Ընկերութեան վաճառատանց մէջ՝

ՍՈՔԹ. Ե. ՄԱՍԻՍ
ԲԵՐԱ, ԹԱԳՍԻՄ ՓՈՂՈՑ, ԹԻԻ 12

- | | | |
|---------|---|--|
| ԲԵՐԱ. | } | 1. Մեծ փողոց, Պօն Մառչէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին՝ |
| | | 2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ. |
| ԿԱԼԱԹԱ. | } | 1. Սինկէր խան, Թիւնէլին ետեւը. |
| | | 2. Դարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | } | 1. Սուլթան Համամ, Թ. |
| | | 2. Սուլթան Պէյաղիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13. |
| ՍԵԻԻՏԱՐ | | Չարչը Պօյու, Թ. 120. |

Դասերը եւ նորոգութիւնք ձեռք.

Կասաբեալ երաշխաւորութիւն:

Մասնահիւղեր գաւառաց բոլոր ֆալաֆետուք մեջ:

Սինկէրի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղօղլուի տունը: 1—10

ՏՕՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ, ԹԱԳՍԻՄ ՓՈՂՈՑ, ԹԻԻ 12

Ամէն տեսակ ներքին հիւանդութիւններէ զան, մասնագիտաբար եւ երկար օտարներէ ի վեր կը դարձանէ սառմաքտի, աղեաց, միզային ճանքաներու հիւանդութիւնները, ջղային տկարութիւնները, հին եւ նոր քաղիակաւ տխրութիւնները: Այս վերջին տխրութիւնները՝ առանց սառմաքտի խանգարման եւ նորագոյն մեթոտներով կը բուժէ կարճ միջոցի մէջ:

Հիւանդ կընդունի ժամէն օր կէս օրէ վերջը 2-րեքշաբթի օրերը միայն ձրի: 1—10

Դ Ե Ր Չ Ա Կ

Վ Ի Չ Ե Ն Ա Լ Ա Ճ Ա Ն Ա Ն

Ղալաթիա, Հարանք փողոց, Բիւ 13

Լաւ տեսակ կեդրաւորութիւն ու ձեւաւոր հոգեւոր պարտաւոր զաւակները, որոնք միջնորդային տնտեսութիւն կը փնտրեն եւ վճարման դիւրին պայմաններ, կըրնան դիմել այս նոր բացուած խանութիւն, եւ մեծ ապէս գոհ պիտի մնան: 1—10